

23764

8
9-76

1985
方序

19
11
28

він з боку суприма зробив
що він багато відбігав
від нас та багато
він з боку примила
зуприєднення

2m2 2

~~~(K-W)~~

8-76  
2-76

8-76 № 1304

Հայոց գրադարանի այլ աշխատավորք  
բարեկայութ պահպանութեան

(Հաստաղակութեան Ամս: Հայութանց)

Տ-Կայքի անդամ. 1296

# ՀԱՅՈ ՄԱՆՐԱՎԵՊ

Թ.ԵՐԳ.ՄՐԸՆՈՒԹ.ԻՒ.

100/  
192

Տ. ՏԵՐ-Ա.Ի.ԵՒ.Բ.Ա.Ա.

Ա. Գ. Ի. Ր. Ք.

ՇՈՒՇԻ

Ե. Տաղանձի Ա. Մահոնի Սահմանականութեան

1881

2003





Վ.Ա.Խ. ԵՏԵԼԻՑ Վ.Ա.ԶՈՂԱԿԱ ՊԱ.ՏՄՈՒԹԻՒՆԸ \*

Դօք. Շեն. Տիֆլիս 26 Հոյերա 1880

Տիլ. Մ. Մուգդուսակովա

Մի հայր երկու որդի ուներ. մեծը՝  
խելքը զլիսին և կարգին տղայ էր, իսկ  
փոքրը՝ ոչ խելօք էր, ոչ մի բան էր կա-  
րողանում հասկանալ և ոչ էլ մի բան էր  
կարողանում սովորել: «Կրան տեսնողը կա-  
սէր. «Ահա մի տղայ որ իւր ծնողներին  
համար մեծ հոգս և ծանր բեռ պէտք է  
լինի»: Ամեն զործի մէջ՝ մեծը գիտէր թէ  
ինչպէս պէտք է վարուել. բայց երեկոյին  
երբ հայրը նրան մի տեղ զըմէր մի բանի  
ետեից, եթէ նա պէտքէ անցկենար մի  
զերեզմանատան միջով կամ ծուռմուռ զը-  
մուար տեղերտվանա ասում էր. „ո՛չ, հայրիկ  
ես այնտեղ չեմ գնալ, վախումեմ. այս տը-

\* ) Գլեշ մասնակիոն առ գոյնեն հետեւ:

ղան մի քէս վախկոտ էր: Եցրբ գլշերները կբակի չորս կողմը նստած այնպիսի ուստամութիւններ էին անում, որ մարդու զինի մարդերը ցից ցից էին կանդնում, բոլոր լորդները կոչում էին: Ո՞չ, ես ի՞նչպէս վախենում եմ:, Բայց ամենից փոքր որդին մնում էր հետու իւր անկիւնում, այդ բոլորը լսում էր առանց հասկանալու և ինքն իրեն ասում էր:, սրանք միշտ վախից են խօսում, իսկ ես ոչինչ մի այդ անսակ բան չեմ զգում: Անտարակոյս երեկ՝ դա ինձ անձանօթ մի խաղ է:”

Ա՞կ օր հոյրը նրան ասաց. “Որդի, դու միշտ այդ քո անկիւնում ընկած մնալով մեծանում ես և ուժովանում. պէտք է որ մի արհեստ սովորես քո ապրուստը ձարելու համար: Տե՛ս, ինչպէս քո եղայրն աշխատում է. իսկ դու, ընդհակառակն, հացը՝ որ ուսում ես կորած է:”—Հոյրիկ, պատասխանեց փոքրը, ես կամաւ ինձ համար մի վլճակ կ'ընտրեմ, բայց առաջ ես ուղարմ եմ մի իմանալ՝ ինչ բան է այդ վակը:, Ա՞ճ եղայրը երբոր այդ խօսքիրը լսեց, սկսեց ծիծաղելու մասին:

ասում էր:,, ինչպէս պարզամիտ է իմ եղբայրս. նրանից բան չի կուրս գալ: Եցրբ ուղարմ են մի բահի կը ունենալ, պէտք է նրա փոյտը իւր ժամանակին ծուն:,, Հոյրը ուսելը թափ տալով պատասխանեց. “Իմանալ թէ ի՞նչ բանէ վախը շատ դժուար չէ, բայց դրանով դու քո հացը չես ձարիլ:”

Մի անգամ եկեղեցու լուսարարը նըրանց տունն եկաւ. հոյրը իւր նեղութիւնները պատմեց նրան և թէ ինչպէս իւր կրտսեր որդին վատ է սովորած, ոչինչ չըգիտէ և ոչինչ էլ չի սովորում:” Դրեւակայեցէք ձեզ, ասաց նա, երբ ես նրան հարցնում եմ թէ ի՞նչպէս պէտք է նա իւր աղբուստը ձարէ, ինձ պատասխանում է որ նա նախ ցանկանում է իմանալ ի՞նչ է վախը:

“Հենց այդ, ասաց լուսարարը, ես իմ վեց եմ առնում նրան կրթել, զրկիր ինձ մօտ, ես շուտով նրան իսելքի կրերեմ:”

Հոյրը շատ ուրախացաւ. նա յշուունէր որ իւր որդին մի քիչ մարդ կ'գտանայ: Այդպէս՝ լուսարարը նրան ընդունեց իւր մօտ և ժամհար կարգեց: Ա՞ի քանի

օր անցնելուց յետոյ, միանդամ կէս գիշերէն՝ լուսարարը վերկացրաւ նրան և պատուիրեց որ գնայ, բարձրանայ զանդակատունը և զարնէ զանդերը: “Ես քեզ կը ծանօթացնեմ վախի հետո,, ասում էր իւր մոքում լուսարարը և կամաց գնաց նրա առաջը կտրեց: Երբոր փոքրիկ պատանին բարձրացաւ զանդակատունը և յետ դարձաւ որ բռնի զանդերի քողերը՝ կամարի տակ սպիտակ մարդի նման մի բան նկատեց: “Դու ո՞վ ես, կանչեց տղան: Իսյց կերպարանքը համբ էր և անշարժ . . . .”

“Ըստ պատասխանիր ինձ կամ թէ չէ՝ դուրս եկ այստեղեց. այս կէս գիշերէն՝ դու այստեղ ոչինչ գործ չունիս,,. Լուսարարը տմենելն չէր շարժում տեղից և ձեւցնում էր իր թէ տեսէլք է ինքը: “Դու ես կանդնել, կրկն կանչեց պատանին, տատ, եթէ յարդելի արարած ես, ապա թէ ոչ քեզ այստեղեց ցած կ'ձգեմ:, : Իսկ լուսարարը կարծում էր թէ նա չի անի այն՝ ինչոր ասում է և շունչը:

**Տղան երբորդ անդամն նրան հարցում**

արաւ և երբ տեսաւ որ ոչինչ չի լինում, առաւ նրան և կամարից ցած ձգեց սանդուղուղի վերոյ, ուրտեղից թրմագրմաղով “աեսիլքը,, զլորուեց և ընկաւ մի անկիւն: Այդ անելուց յետոյ պատանին զանդերը զարկեց և զարձաւ իւր սենեակը, շորերը հանեց, պառկեց, քնեց առանց մի խօսք ասելու:

Լուսարարի կնիկը սպասում էր իւր մարդին, բայց սա չէր վերադառնում. վերջը նա շատ անհանդիստ եղաւ, զարթեցրեց փոքրիկ տղին և հարցրաւ. “Դու չը դիմե՞ս ուր է իմ մարդս, նա քեզնից առաջ բարձրացաւ զանդակատուն:,, “Զը՞զիտեմ, պատասխանեց նա, ես մի մարդ տեսմի զանդակատան զրան կամարի տակ կանդնած սանդուղի վերևում և որովհետեւ նա ո՛չ խօսքիս պատասխանում էր և ո՛չ տեղիցը շարժում, ես կարծեցի որ նա գող պէտք է լինի, առի և ցած ձգեցի. գն'ա, դու նրան այստեղ կ'գտնես, եթէ նա քո մարդն է,,,”

**Ալնը վաղեց և յիրաւի գտաւ այնտեղ ընկած իւր մարդին, որը աշխ էր քա-**

շում. նա մի ոտք կոտրել էր. կինը նրան  
մի կերպ տուն հասացրաւ և խսկոյն տղա-  
յի հօրը բռնեց և կոչելով ասում էր.  
“Քո որդին ինձ մեծ անբազութեան մէջ  
է ձգել. նա իմ մարդիս սանդուղքի վըսյից  
վար է ձգել և նրա մի ոտն էլ կոտրվել է.  
շուտով այդ սրիկային հեռացրու մեզանից:,,  
Հայրը վագեց իւր որդու մօտ և նրան  
սարսափելի կերպով յանդիմանեց: “Այ,  
տղայ, ստունան քո մէջն է մտել:,,

“Հայրիկ, պատախանեց որդին, ինձ  
ականջ դիր. այդ ամեննեին իմ սխալս չէ.  
մուժ դիշեր էր, ես նկատեցի մի մարդ,  
որ բարի գիտաւորութիւն ունեցողի կեր-  
պարանք չունէր: Ես չ'ձանաչեցի թէ նա  
ով է և երեք անդամ ինդրեցի որ կամ գնա  
կամ խօսի:,, Ո՛հ, ասաց հայրը, դու միշտ  
տիրութիւններից ես խօսում, հեռացիր կո-  
րիր առաջից որ էլքեղ չ'տեսնեմ:,,

— “Հայրիկ, խնդրեմ սպասիր մինչեւ ա-  
ռաւօտ, հէնց որ լուսացաւ՝ ես կերթամ  
վախը գտնելու, որից յետոյ կ'սկսեմ մի ար-  
հետով պարապել իմ հայս ճարելու հա-  
մար:,,

“Օ բարսի՞ր ինչով ուղումես, ինձ  
համար ողջ մէկ է, ասաց հայրը, ահաքեզ  
50 թաղեր այնպէս արա, որ դրանով կա-  
տարենք ճանապարհորդութիւնը և ոչ մին  
մարդու չասես ոչ քո, ոչ իմ անունը, որ  
պէս զի ես քո աեղ չ'կարմիմ:,,

— Հայրիկ, եթէ զորանից աւելի պա-  
տուիրելու բան չունիս, հեշտ է քեզ գոհա-  
ցնել:

Երեք ծագելուն պէս, պատանին 50  
թաղերը զրպանը դրած ճանապարհ լնկաւ  
անդագար կրկնելով. “Ե՛ս, ինչպէս ես ցան-  
կանում եմ վախ զգալ:,, Մի անցող լսե-  
լով այս խօսքերը, մօտեցաւ և ցցց աս-  
լով հեռուն մի կախաղան առաջ նրան. “Տես-  
նում ես ահա ցածում այն ծառն. նրա վե-  
րայ կայ և օթը ծագածուներ, որոնք յար-  
ձակուած են չուան մանողի. աղջկայ վրա.  
այժմ նրանք սովորում են թռչունի պէս  
թռչել: Եթէ դու մի գիշեր անցկացնես  
այդ ծառի տակ, կ'սմանսա թէ ինչ է վա-  
խը:,, Ուրիշ բան պէտք չէ, հարցը ց  
պատանին, այդ դժուար չէ: եթէ ես այդ-  
պէս շուտով ծանօթանամ վախի հետ իմ

յ'սուն թալերը քնիը կ'Անէն. վաղ սուա-  
ւու եկ ինձ մօտ:,;

Երիտասարդ պատանէն գնաց որ ծա-  
ռի տակը պառկի. դէշերուայ մեջ տեղը քա-  
մին այնպէս ցրտացաւ, որ չնոյելով վա-  
ռած կրակին այնուամենայնիւն նա չէր տա-  
քանում: Տղան ասաց ինքն իրան. եթէ ես  
այս կրտկի մօտ մըսում եմ, նրանք ես աւե-  
լի կ'մշտեն բարձրում ծառի վրա, և ինչպէս  
քաջասիրտ տղոյ՝ բարձրացաւ սանդուղքնե-  
րով և ցած բերաւ մէկը միւսի ետեւից բո-  
լոր եօթին:

Եպա վառեց կրակը, փէց որ նա  
բորբոքուի և նրանց կրակի ջրս կողմը կար-  
գեց՝ որ կարողանան տոքանալ: Ի՞սյց նը-  
րանք ամենելին չէլն շարժվում և կրակը  
կպաւ նրանց շորերէն: — “Օդոյշ կտցէք,  
ասաց նա նրանց, ատղա թէ ոչ ես կ'տա-  
նեմ ձեզ կ'դնիմ այնտեղ, ուրտեղից վեր եմ  
տռել:”, Ի՞սյց մեռեները ոչինչ չլսեցին և  
նրանց ցնցուիները սկսեցին սյրուել:

— “Որովհետեւ դուք չկամիք ձեզ օգնել,  
ասաց նա բարկացած, ես չեմ կարող ձեզ խո-  
րված դարձնել:,, յետոյ նրանց տարաւ.

Ճառից կախ արաւ և յնքը եկաւ քնեց  
կրակի մօտ:

Միւս օրը առաւտեան սյդ մարդը  
եկաւ որ ստանայ իւր յիսուն թալերը և  
մօտենալով նրան ասաց. , ,ինչ է, Ճանաչե-  
ցէ՞ր վախը!..” Ամեւին, պատասխանեց տը-  
ղան, ինչպէս Ճանաչեմ նրան: Այն ծաղ-  
րածուները և ոչ իսկ մի անդամ բերան  
բացէն: Նրանք այնքան անխելք են որ իրենց  
վարտիկները կրակին էլն տուել:,, Պա-  
րմիը շատ լաւ տեմնելով որ յիսուն թալե-  
րը իրեն համար չէլն, դլուխը քաշ ձղան  
հեռացաւ մտածելով որ իւր կեանքում  
գեռ մի այդ տեսակ բան չէր տեսել:

Պատանին շարունակում էր իւր Ճա-  
նապարհը անդադար մրմռալով. , ,ուրեմն  
ես երբէք վախ չեմզգալ“...” Այդ խօս-  
քը լսեց մի սոյլորդ, որ գնում էր նրա  
ետեւից և որ նրան հարցրաւ., ,Ո՞վ ես դու,,

— Զը գիտեմ:

— , , Ինչպէս է քո անունը: “

— Ես չեմ կարող ասել.

— Այդ ինչ ես անդադար կրկնում քը-  
թիդ տակին:

— Աւաղ ես ցանկանում եմ վախ զգալ  
սովորել, բայց այդ ինձ չէ յաջողում:

— , Ուստի այդ յիմարութիւնները, եկ,  
եկ իմ ետևիցս, ես կաշխատեմ քեզ մի  
գործի գնել: “Տղան դնաց սոյլորդի հետ  
և երեկոյեան նրանք հասան մի իջևան,  
ուրտեղ պէտքէ դիշերն անցընեն:

Այնտեղ մանելով նա ելե կրկնումը  
իւր մշտական խօսքը. „Աւ ինչպէս ու-  
զում եմ վախ զգալ:“ Տան տէրը նրան  
պատամանեց ծիծառելով. „Եթէ այդ է  
քո ցանկութիւնը շուտով ես քեզ համար  
առիթ կճարեմ, որ դու համնես քո ուղա-  
ծին:“ Աւ լսիր, կանչեց կինը, ով ընկել  
է այդ աբկածի մէջ, եւ յետ չի դարձել.  
Ինչպէս ցաւալի կիմնի որ զրա այդ գեղե-  
ցիկ աչքերը եւ լոյս աշխահք չաենեն:

— Ինչքան եւ դժուար չլինի, պատաս-  
խանեց պատանին ես ուզումմամ ձանաչել  
վախին: Պրտ համար է որ ես ձանապար-  
հողում եմ. և նա տանտէրին հանգիստ  
չտուաւ մինչեւ որ սա պատմեց որ իրենց  
շըակայքում կայ մի հոչակաւոր ամրոց,  
ուրտեղ երեք դիշեր անցկացնելով կարելի

է լաւ ծանօթանալ վախին հետ: Ծագա-  
ւորը խոստացել էր իւր աղջիկը պասկել  
այն տղամարդի հետ, որը այդ փորձան-  
քից յաղթող դուրս կտայ, նրա աղջիկն է  
ամենագեղցիկը աշխարհիս երեսին: Այդ  
ամրոցում պէտքէ նոյնպէս տիրել ողինե-  
րից պահպանուող գանձին, որով պիտի սկո-  
փուին և հարստանան աղքանները: Այ-  
դէն շատ մարդիկ մտել են այնտեղ, բայց  
ոչ ոք դուրս չէ եկել:

♦ Ետևեալ օրը պատանին գնաց թա-  
գաւորի մօտ և ասաց. „Եթէ Ձեր Անծու-  
թիւնը թոյլ կտայ, ես երեք դիշեր կանց-  
կացնեմ հոչակաւոր ամրոցում:“ “Թագաւո-  
րին շատ դուր եկաւ նրա գէմքը և նա  
պատասխանեց.„, դու կարող ես երեք բան  
խնդրել և քեզ հետ տանել ամրոց, միայն  
դրանք անշունչ իրեր պիտի լինեն:“

Տղան ինսդրեց կրակ, մի մամուլ, ա-  
տաղձագործի մի սեղան իւր կացինով:

Ձերեկով այդ բոլորը տարին ամրոցը:  
Արբ որ գիշեր եղաւ, պատանին եկաւ այնաեղը  
մի սենեակում խիստ մեծ կրակ արաւ, մօար  
գրաւ իւր ուղանը իւր կացինով և նստեց

նստարանի վրա: “ Ի՞սյց ե՞րբ կ'զգամ և սվախ, ասում էր նա, աւաղ այս անդամն էլ այդ չէ պատահութ:,,

**Ա**յս գիշերուայ: միջոցին երբ նա փը-  
չում էր կրակը արծարծելու համար, յան-  
կարծ մի կողմից մի ձայն լոռեցաւ որ կան-  
չում էր “ հառ, մեառ, ինչոք ցուրտէ:

— Հիմարնե՛ր, կանչեց տղան, ի՞նչ էք  
գանգատվում, եթէ մըսում էք, եկէք կրա-  
կի մօս տաքացէք:,, Ասաց նա ոյս թէ չէ,  
մէկէն երկու մեծ սե կատուներ ցատկելով  
եկան նրա դիմաց նստեցին և նայում էին  
տղին իրենց վառվառն աչքերով: “ Սրանք  
սկսեցին տաքանալ և ասում էին. “ ընկե՛ր,  
չ'կամիս մեղ հետ մի ձեռք թուղթ խա-  
ղալ:,, — ինչու չէ, պատասխանեց նա. բայց  
առաջ կ'թողնէ՞ք տեսնեմ ձեր թաթերը:,,  
**Վ**ատուները գուրս բերեն իրենց ձանկերը:

— Ա՞յս, ի՞նչ ահազին եղունդներ ու-  
նիք, տուէք ես նրանց կտրտեմ:,, Եւ նա  
բռնեց նրանց վկից ու թաթերը դրաւ մա-  
մուլի տախտակների մէջ: “ Այժմ, ասաց  
նա, որովհետեւ ես տեսայ ձեր թաթերը էլ  
չեմ ուղում ձեղ հետ խաղալ:,, և նոյն կոյր-

կենչն վրայ բերաւ կացինը և կտրեց եր-  
կուսի զլուխնել և ձղեց մի լճակի մէջ, որ  
դանվում էր իւր պատուհանի տակ: “ Աս  
կարծելով թէ զբանով եղած արակի մօտ  
պարկեց. բայց ամեն կողմից վորս եկան  
կատուների և մեջների խարեր վայըլուն  
մանեակներով վղեկրում: այժքան հաւա-  
քուեցան, որ խեղճ տղին կանգնելու տեղ  
չ'մնաց: “ Այս նախ մնաց հանդարտ կանդ-  
նած, բայց որովհետեւ նրանք ձանձրու-  
թիւն էին պատճառում, ուստի նա վեր ա-  
ռաւ կացինը և բղաւեց. “ զուրս այսուե-  
զեց, անպիտամներ, “ ու ընկաւ նրանց մէջ  
ջարդելով աջ ու ձախ: “ Այս նրանց մի մա-  
սու սպանեց, իսկ միւս մարը փախաւ: Սպա-  
նուածներին նա թափեց լճակի մէջ: Այժմ  
կոռի ից յետոյ փէտց վառեց կրակը և սկսու-  
տաքանալ: Ըստով նրանց նջը եկաւ, տչ-  
քերը շըջեց զէպի չորս կողմը և տեսաւ  
մի անկիւնում մի մեծ անկողինք, նա գնաց  
մտու նրա մէջ: Իսյց հաղիւ թէ աչ-  
քերը խփել էր, ահա մահիճը սկսեց ման-  
գալ և վառվառ բոլոր ամիսցը: — “ Խիստ  
լաւ, ասաց նա, էլ սրանց լաւ բան չի լի-

նէլ:, Անկողինքը կարծես վեց ձիով լծուած թռչում էր, նա անցնում էր դռները սանդուղքները, ցածանում էր և բարձրանում, ասես պատանին բռնուած լիներ մի սարի տակ, սակայն նա դէն ճգեց վերմանկը և մատրասը, “Այժմ դնա ուր ուզում ես:, Ապա պառկելով կրակի մօտ քնեց հանդիմտ մինչև լուսանողը:

Առաւօտը թագաւորն եկաւ, որ տեսնէ ինչ է պատահել և դուաւ նրան գետնի վռա պառկած, նա կարծեց թէ տեսիները նրան սպանել են:

“Հատ ցաւալի է, ասաց նա, շատ զեղեցիկ տղայ եր:, Պատանին այդ խօսքերը լսելով զարթեց և ասաց. “Փառաւորապէս ես սյատեղ եմ:, թագաւորը զարմացաւ և գո՞յ մնաց, նա հարցըրաւ թէ ի՞նչ է պատահել նրան դիշերը:” “Ոչինչ, պատախանեց տղան, ահա մի գիշերն անցաւ, մնաց սյանիներն էլ նոյնպէս կանցնեն:, Պանդոկապետը նրան չորս աչքով եր նայում:

“Ես ամենեին չէ՛ կարծում, որ քեզ կենդանի՝ կ'գտնեմ, ասում էր նա, բայց

այժմ դու հասկացա՞ր ինչ է վախը:” “Ոչ պատախանեց երիտասարդը, գեռ ոչինչ չը դիտեմ. ուրեմն մէկը չ'կայ որ ինձ սորվեցնի թէ ինչ է վախը:

Երկրորդ գիշերը նա էլի վերադարձաւ հին ամրոցը, պառկեց կրակի մօտ և կրկնեց իւր մշտական խօսքը. “Դանչպէս ես ուզում եմ վախը զդալ:, Գիշերուայ մէջ տեղը մի տեսակ աղաղակ լսուեցաւ, առաջ շատ հեռու, յետոյ մօտեցաւ, մօտեցաւ և վերջապէս յերդիկից մի մարդի “Կէս,, վար ընկաւ: () Հօ, կանչեց մեր պատանին, հէ՞նց մի “Կէս,, այդ քիչ է, միւս կէսն էլ պէտք է: Աղաղակը սկսեց կրկն սաստկանալ, բղաւոց էր լավում մըրկի պէս և երկրորդ կէսն էլ ընկաւ առաջինի մօտ: “Ապասիր, ես քեզ համար կրակ կ'վառեմ:, երբ նա վերջացրաւ, յետ գարձաւ և տեսաւ որ երկու կէսերը միացել և դարձել էին մի ահարկումարդ որ և նստել էր նրա տեղը: “Այդ մեր պայմանի մէջ չէ մանում, ասաց երկտասարդը, այդ նստարանն իմն է::,

Արդին ուզեց նրան յետ մղել, բայց պատանին չ'թողեց և մէկն հեռացրաւ նը-

բան ու անցաւ իւր տեղը: “Այս վայրկենին յերդիկից թափուեցան էլի մի քանի մարդիկ մէկը միւսի ետևից: “Արանք իրենց հետ բերին երկու գանդ և ինն մեռելի սըրունքներ և սկսեցին նրանցով խաղալ պատանին ուղեց ինքն էլ մասնակցել. —կարող եմ ես էլ խաղալ, հարցրեց նա: Այս, եթէ փող ունիս: —“Փող ես բաւական ունիմ, բայց ձեր գնտակները լաւ գոլոր չեն. և առաւ ու գլորցրեց: “Այժմ, ասաց նա, նրանք լաւ կ'շըջեն, ո՞չ, մենք վառաւոր զուարձութիւն կունինանք:,, “Աս խաղաց և մի քանի դահեկան տանել տուաւ. բայց երբ յանկարծ զարկեց կէս գիշերն՝ ամենքը աներեւութացան և նա քնեց հանդիստ մինչի լոյս: Միւս օրը թագաւորն եկաւ, որ տեղեկանայ թէ ինչ է պատահել. —“Ի՞նչ նոր բան կայ, հարցրաւ նա: —“Ես կոջիսացի այս գիշեր և երկու լիարդ տանել տուի: —Իսկ դու վախ չունեցար: —Ամենելին, ես զուարձացի. բայց ե՞րբ ես կիմանամ թէ ի՞նչ է այդ վախը:,,

Երրորդ գիշերը նա նստեց իւր նըստարանի վրա անհամբեր կրկնելով. “Ա” և

եթէ ես կարողանայի վախ զգալ,, Արդէն բաւական գիշեր էր անցել, երբ վեց ծաղրածոներ՝ սենեակի մէջ մի դագաղը բերին: —“Ո՞չ, ո՞չ այդ երեխ իմ փոքր քեռիս է, որ ահա երկու օր է որ մեռել է:, Եւ մատներով նշան արաւ ու կանչեց նըստան. “Եկ իմ փոքր քեռի, եկ:, Մարդիկ գետնին դրին դագաղը, նա մօտեցաւ, վեր առաւ կախարիչը. այնտեղ կար մի դիակ պատանքի մէջ, նա շօշափեց զրա երեսը և տեսաւ որ շատ սառն է. “սպասիր ես քեզ կ'տաքացնեմ:” ասաց նա. կրակի վրա տաքացրաւ իւր ձեռքերը և քսեց նրա երեսը. բայց մեռելը էլի սառն էր: Ծետոյ նա նրան հանեց դագաղից և ծնկերի վրա դընելով կրակի դիմաց՝ հարում էր նրա անդամները, որ արիւնը շարժի նրա մէջ, սակայն էլի ոչինչ չ'աջողուեց: Ապա նրա միտքը եկաւ որ եթէ երկու հոգի միասին պառկեն՝ նրանք կ'տաքացնեն իրար. նա մեռելին տարաւ իւր անկողինքը, նրան լաւ ծածկեց և ինքն էլ մօտպվը պառկեց: Իսակոյն տաքացաւ դիակը և սկսեց շարժուել: “Տե՛ս, փոքր քեռիս, ես քեզ տաքացրի:,,

Բայց մեռելը յանկարծ սկսեց դոռապ. “Հիւ-  
մա ես պէտք է քեզ խեղդեմ;”

— Ա՞նչի, այդ էլ իմ վա՞րձքն է. դու այս  
բօպէն կերթաս էլի կմննես դագաղը. և  
շուտ վեր առաւ նրան ձերց դագաղի մէջ  
և ծածկեց կափարչով: Այց մարդիկը մը-  
տան խկոյն և տարին դագաղը: ‘Այս,  
մտածում էր նա, ես երբէք չեմ իմանալ  
ի՞նչ է վախը իմ կեանքումն, ես երբէք  
ոչինչ չպիտի կարողանամ սովորել:,, Այդ  
պատահմննքից յետոյ ներս մտաւ մի աւե-  
լի մեծ մարդ ահաւոր կերպարանքով. նա  
ծեր էր և մի երկար սպիտակ մօրուք ու-  
նէր: ‘Թաշը աւական շարածճ՝, կոչեց նա,  
դու շուտով կիմանաս ի՞նչ է վախը, որով-  
չետեւ դու կ'մեռնես:,, ‘Ոչ այդքան շուտ,  
պատասխանեց պատանին. ինձ սպանելու  
համար պէտք է որ երկուսս էլ ցանկութիւն  
ունենանք:,, — ‘Ես քեզ իմ բազուկներիս  
մէջ կ'ամփոփեմ:’ ‘ասաց հսկան:

— ‘Կատ ուրախ եմ, շատ ուրսխ եմ,  
պատասխանեց տղան, շատ մի ուռչի, եթէ  
դու ուժով ես, ես էլ ուժով եմ և քեզա-  
նից էլ աւելի:,,

— Այժմ կ'աեսնենք, կանչեց ծերունին,  
եթէ ինձանից ուժով ես, ես քեզ կ'սմնար-  
հուեմ: բայց եկ փորձենք: ‘Ես նրան տա-  
րաւ մութ անցքերով դեպի մի գարբնոց,  
ուր վեր առնելով մուրճը խփեց մի սալի,  
որ մի հարուածով մտաւ հողիմէջ: ‘Ես,  
քեզանից աւելի ուժով կ'անեմ:, ասաց պա-  
տանին և մօտեցաւ մի ուրիշ սալի. ծերու-  
նին լաւ տեսնելու համար՝ բոլորովին նրա  
կողքին կանգնեց իւր երկար կտիս արած  
միքով: ‘Ե՞յն վայրկենին պատանին վեր  
առաւ մի կացին ու պատոելով սալը՝ մէջը  
դրաւ ծերունու միտուքը ինչպէս մամյում:’  
‘Այժմ ես քեզ կ'քաշեմ և դու ես որ կը  
մեռնես և ոչ թէ ես:,, Յետոյ առաւ մի  
երկաթի գաւաղան և սկսեց հարուածել  
ծեր մարդին. մինչև որ սա սկսեց աղաչել  
և լաց լինել որ նա իրեն աղատի և խոս-  
տացաւ նրան տալ ահագին հարատութիւն:’  
Այդ պայմանաւ պատանին նրան բաց թո-  
ղեց: ‘Օերունին նրան տարաւ ամրոցը և  
ցոյց տուաւ մի ներքնատան մէջ երեք ար-  
կըլլիք ոսկով. ‘Առաջինն, ասաց, աղքատ-  
ների համար, երկրորդը թաղաւորին, իսկ

երորդը քեզ համար,,,: Հնց այդ ասելուց կէս գիշերը զարկեց, տեսիլը աներեւաթացաւ և երիտասարդը մնաց իստարի մէջ: Ի՞այց նա ամենելին չ'շփոթուեց, կոյրի պէս շօշափելով դնաց գտաւ իւր սենեակը և քնեց կրակի մօտ: Առաւոտը թագաւորն եկաւ և հարցրաւ. “Ի՞նչ, այժմ իմացա՞ր ինչէ վախը,,,:—“Տեսել եմ մեռած քեռուս, մի ուրիշ մեծ մօրուքով մարդու, որ ինձ ցցյ տուաւ գանձեր, բայց ոչ մէկը ինձ չ'ծանօթացրաւ վախի հետ:,, Թագաւորը նրան ասաց. “Դու աղատել ես ամբոցը. իմ աղջիկը քոնն է:,,,—“Խիստ լաւ, պատասխանեց պատանին, բայց այդ ամենին հակառակ՝ ես չիմացայ ի՞նչէ վախը:,, Տէրեցին գանձերին և շուտով հարասանէք արին:

Ի՞այց երիտասարդ իշխանը ի՞նչքան էլ գոհ լինէր և սիրէր իւր կնոջը, այնուամենայնիւ էլի կրկնում էր. “Ա՞ս, միայն թէ ես մի վախ զբայի:,, Ա երջապէս իշխանուհին համբերութիւնից ելաւ. նրա նախութը ասաց. “Տիկին, եթէ ինձ թողէք՝ ես շուտով նրան կ'կրթեմ:,, Աս դնաց ի-

րանց պարտիղի տակով անցնող գետակից վերառաւ մի սափոր ջուր լիք խիճով: Երբ հասաւ գիշերը և երիտասարդ իշխանը քը նել էր, իշխանուհին դէն ձկեց վերմակը մարդու վրայից և սափորի սառը ջուրը թափեց նրա վրա:—“Օ՛հ, օ՛հ, կանչեց վերկենալով իշխանը, ի՞նչպէս վախեցայ, այժմ ես իմացայ ի՞նչէ վախը:,,

17 ին Յուլիսի 1880 ամէ Մայիս:

ՀԱՅՈՒՅՈՒՆ

ԿՈՌԵԼՅԱ ԼՊԱԳԻ ԳԱՂՏՆԻՔ  
(ԱԼՅՈՆ ԴՕՒ)

Եմ հին բարեկամ սրինդ ածող Պարանկ  
Ամայը, որ երեմն երեկոները գալիս է  
ինձ մօտ ասելու — խօսելու և լաւ թարմ գիշ-  
նի խմելու, — այս օրերս ինձ պատմեց մի  
գիւղական տիսուր անցք, որ պատահել է  
իմ ջրաղացում 20 տարի սրանից առաջ:  
Բարեսիրտ ծերունու պատմութիւնը շար-  
ժեց իմ սիրտը և ես կաշխատեմ պատմել  
ձեզ նրա ասածները ճիշտ այնպէս՝ ինչ-  
պէս ես ինքս եմ լսել:

Եմ փոքրիկ լնթերցողներ, երեա-  
կայեցէք՝ իբր թէ դուք նստած էք, ձեր  
առաջներին զրած են թշող գինու բա-  
ժակներ և ծերունի սրինդ ածողը անում  
է իւր պատմութիւնը:

“Դամ բարի պարոն, մեր կողմերը միշտ  
այսպէս խուլ ու մեռած չեն եղել ինչպէս  
հիմա։ Առաջուսայ ժամանակները մեր ջրա-  
ղացներում մեծ գործեր էին կատարվում։  
մեզնից ինն վերստ հեռու ապրող հողա-  
գործները իրենց ցորենը մեզ մօտ էին բե-  
րում աղալու. . . . : Ա՞ր գիւղի չորս կող-  
մի բլուրները ծածկուած էին հողմաղաց-  
ներով։

Այն ժամանակները՝ ուր որ չնայէիր-  
թէ աջ, թէ ձախ, ամեն կողմ կ'տեսնէիր  
ինչպէս հողմաղացների թևերը պտըտվում  
են եղենիների վրայից։ Փոքրիկ տոպրակնե-  
րով բեռնաւորուած էշերը շարք-շարք լեռ-  
նակից լիռնակ էին բարձրանում նեղ ծու-  
ռումուռ. ճանապարհներով։ Շատ տուրե-  
կան բան էր որ ամբողջ շաբաթը այդ բլուր-  
ներից լսում էիր մտրակների ձայնը, տոռ-  
րակների վրայի սփռոցների խշխոցը և  
բեռնաւորների աղաղակը։

Ոիրակէ օրերը մենք բազմութեամբ  
գնում էինք դէպի հողմաղացները. ջրաղաց-  
պանները մշկահոտ գինի էին առնում. իսկ  
նրանց գեղեցիկ կնանիքը յուլունքներով և

փոքրիկ խաչերով էին զարդարուած ինչպէս  
մէկ-մէկ թագուհիներ։ Ես ինձ հետ բե-  
րում էի իմ սրինգը և մինչև գիշերուայ մէջ  
տեղը պար էինք գալիս։

Ա՞ի խօսքով այդ ջրաղացները էին  
բոլոր մեր ուրախութիւնը և մեր կողմե-  
րի հարստութիւնը։ Դժբաղդպաբար մի  
ֆրանցուզ Փարիզից դէպի Յարարկօն  
գնացող ճանապարհի վրա մի շոգէաղաց շե-  
նեց։ Եւ ահա քեզ ‘նոր բան,, — ‘լաւ  
բան,, ինչպէս ասում են մեզանում։

Գիւղացիները սկսեցին իրենց ցորե-  
նը այնուեղ աղալ և խեղճ հողմաղացները  
մնացին անգործ։ Ա՞ի քանի ժամանակ նը-  
րանք փորձեցին մրցել շոգիաղացների հետ,  
բայց ՚ի զուր, շոգին յաղթեց. մէկը միւսի  
ետեից հողմաղացները փակուեցան. էլ փոք-  
րիկ էշերին չէիր տեսնել. . . . :

Գրաղացպանների գեղեցիկ կնանիքը  
ծախեցին իրանց ոսկի խաչիկները. . . Աշկար  
մշկահոտ գինի, պարերը վերջացան. . . . էլ  
՚ի զուր էր փում քամին, հողմաղացների  
թևերը չէին շարժվում. . . . Աերջապէս մի  
փառաւոր օր գիւղի հասարակութիւնը վըճ-

ուեց քանդել այդ հողմաղացները և նրան  
տեղ ձիթենի ու խաղող տնկել։ Ի՞սկ չը  
նայելով այդ գժբաղդ հարուածին, հողմա-  
ղացներից մինը, որ գտնվում էր շոգիաղա-  
ցի քթի տակ, քաջութեամբ շարունակում  
էր շարժել իւր թերերը։ Այդ Առնելպա-  
պի ջրաղացն էր, որի մեջ մենք այս բոպէ-  
խ նոտած խօսում ենք։

Առնելը հին ջրաղացպան էր, նա իւր  
ալիւրով ապրել էր 60 տարի և անչափ սի-  
րում էր իւր արհեստը։ Ըստիաղացի ե-  
րեալը սկզբում դրեթէ նրան խելքից ձեց։  
Ամբողջ մի շաբաթ նա վազվզում էր ի-  
րենց գիւղով, ժողովում էր գիւղացիներին  
և գուռում կոչումով քարողում էր որ այդ  
պահովները ուղում են թունաւուել ամբողջ  
Պրօվանսը իրենց շոգիի ալիւրով։ “Ա՛  
գնաք այնտեղ,“ ասում էր նա, այդ աւա-  
զակները ալիւր շինելու համար գործ են  
ածում շողի, իսկ շողին սատանայի իրեն  
հնարան է……» սկսկ ես բանում եմ քամիով,  
որ է Աստուծոյ շունչը։ . . . .

Եւ ուրիշ շատ այդ տեսակ բաներ էր

ասում իւր հողմաղացները պահպանելու  
համար, բայց ոչ ոք չէր լսում։ Այն ժա-  
մանակ զայրացած ծերունին փակուեց իւր  
հողմաղացի մէջ և սկսեց ապրել միայն, ինչ-  
պէս վայրի գաղան։ “Աս մինչեւ անդամը ըս-  
թողեց որ իրեն մօտ ապրի իւր թուն տան-  
հինդ ամեայ գեղեցիկ Ա խվետան, որն իւր  
ծնորների մեռնելուց յետոյ միայն մի պապ  
ունէր : . . . .

Խեղճ՝ աղջիկը ստիպուած էր ինքը  
միայն իւր ապրուստը ձարել. շրջում էր  
գիւղերը, մի տեղ հնձում էր, միւս տեղը  
ձիթապտուղ էր ժողովում և այլ տեղշերամ։  
Ի՞սկ ծերունի պապը իւր թուանը շատ  
սիրում էր. օրինակ՝ նա շատ անգամ օրու-  
այ ամենատաք միջոցին գնում էր գիւղե-  
րում գտնում իւր այդ սիրելի աղջկան,  
նայում էր ամբողջ ժամեր նրա վրա և լսոց  
էր լինում առանց աչքը նրանից վերցնե-  
լու։ Աներ կողմերում այնպէս էին համո-  
զուած, որ իր հին ջրաղացպանը իւր Ա ե-  
կիւտայից բաժանուել է Ժլատութիւնից և  
որ նա շատ վատ է վարուել թոյլ տալով  
խեղջաղջկանը ընկնել գիւղեց գիւղը դործ

ունենալ կոպիտ տէրերի հետ և ենթարկուել բոլոր այն վտանգներին, որոնք սպասում են օտարական աշխատաւոր աղջկանը:

“Այնպէս ոչ ոք չէր հաւանում այն բանին, որ Աօռնէյլ պապի պէս մի յարգելի մարդ և որ մինչեւ այն ժամանակ պահում էր իւր արժանաւորութիւնը, այժմ սկսել է պտտել փողոցները ինչպէս գնչուցնցուախ շորերով, ծակ գտակով, ոտարորիկ:... Բանն այստեղ հասաւ, որ կիւրակէ օրերը երբ նա գալիս էր պատարագին՝ մենք ուրիշ ծերունիներս ամաչում էինք նրա տեղ. այդ բանը ինքն էլ լաւ նկատում էր, և սկսեց էլ տուաջ չ'կանգնել եկեղեցու մէջ, այլ հեռու գաւթում աղքատների հետ: Աօռնէլի կետնքը դարձել էր մի գաղտնիք. վաղուց էր որ ոչ մի գիւղացի չէր տարել նրա մատ ցորեն աղալու, բայց նրա հողմաղցի թևերը առաջուայ պէս շարժվում էին:... Լըեկյեան պատահում էին ծերունի Աօռնէլն, որ էշին բեռնում էր ալիւրի տոռլրակներ:

—Ի՞արի երեկոյ, Աօռնէյլ պապ, կանչում էին նրան գիւղացիք. ի՞նչպէս է գործդ,

լա՞ է յառաջ գնում:

—Փառք Աստուծոյ, որդիքս, գնումէ, շատ լաւ է գնում, պատասխանում էր նա խորամանկ կերպով:

Ի՞այց երբ նրան շատ խնդրում էին, որ նա ասի թէ ո՞ւրտեղից է այնքան գործ գտնում, նա մատը գնում էր բերնին և հաղիւ թէ շունչ էր առնում. “սո՞ւ, ես օտար կողմերի համար եմ բանում. և աւելի բան նրանից դուրս չէիր կարող քաշել:

“Նրա հողմաղացը մոնել՝ բոլորովին ան կարելի էր, մինչեւ անդամ Ա խվետտան չէր կարողանում ներս նայել:

Հողմաղացի դուռը միշտ ամուր փակուած էր լինում. ահագին թևերը միշտ շարժվում էին, հին էշը էլի առաջուայ պէս խոտ էր արածում բակում, իսկ պատուհանի տակ արևում պարկած էր լինում մեծ նիշար կատոն, որ մտիկ էր անում բարկացած աչքերով: Այդ հողմաղացը մի խորհրդաւոր կերպարանք էր ստացել և այն կողմերում բողորը խօսում էլն նրա վրատ Ամեն ոք մի տեսակ էր բացատրում Աօռնէյլ պապի գաղտնիքը և միաձայն վճռել

Էին, որ նրա հողմաղացում աւելի փողի՝  
քան թէ ալիւրի քսակներ կան:

Բայց վերջ ի վերջոյ բանը յայտնի  
եղաւ և ահա ինչպէս:

Ա՞ր կոլմերի տղաներին և աղջիկ-  
ներին պար ածելով, ես՝ մի գեղեցիկ օր  
նկատեցի որ իմ տղամարդիկներից մեծը և  
Ա իմետան սիրահարուել են: Ես ամե-  
նելին անբաւական չէի դրանով. Ասոնէլի  
անոնը մեզանումմեծ պատռումէր և բա-  
ցի դրանից ես շատ ուրախ կլինէի իմ տա-  
նը պահպանել այդ գեղեցիկ Ա իմետա-  
յին:... Եւ երկար չ'մտածեցի, վճռեցի շու-  
տով վերջ տալ այդ գործին և ճնշապարհ  
ընկայ գէպի հողմաղացը, որ մի երկու խօսք  
ասեմ ծերունի պապին: Ա և, ծեր կա-  
խարդ. պէտք էր տեսնել թէ ի՞նչպէս ըն-  
դունեց նա ինձ, դուռը չի բանում. որ չի  
բանում.... Բանալիի ծակով ես նրան մի  
կերպ բացատրեցի բանը. և բոլոր ժամա-  
նակերբ ես խօսում էի, այն անպիտան կա-  
տուն, որի կաշին և ոսկորներն էին մնա-  
ցել, ինչպէս սատանայ մռմռում էր գլխիս  
վերևից: Օ երունին չ'թողեց որ ես վեր-

ջացնեմ խօսքս և ամենաանվայել կերպով  
բղաւեց իմ վրա և ասաց որ ես գնամ իմ  
սրինդի ետևից և եթէ ուղում եմ այդպէս  
շուտ պատկեր իմ տղին, թող գնամ հարա-  
նացու գտնեմ շողիաղացներում: Ի հարկէ  
այդ տեսակ պատասխանից արիւնս դլխիս  
զարկեց, բայց էլի ուշ ինձ պահեցի, ես  
հեռացի այդ հինուուրց ծերունուց՝ թող-  
նելով նրան իւր ջրաղացքարերի հետ և վե-  
րադարձի, պատմեցի մեր նշանուածներին  
իմ անյաջողութեան մասին....

Խեզմերը ինձ չէին հաւատում և ա-  
մես ողորմութիւն էին խնկրում, որ ես  
թոյլ տամ՝ իրենք երկուառվ դնան հողմա-  
ղացը և խօսեն պապի հետ:...

Ես սիրո չ'արի նրանց իննիւրքը մեր-  
ժել և մի բոպէում նրանց հետքը կորաւ:  
Հէնց այն ժամին երբ նրանք համում  
են այստեղ, Ասոնէյլ պապը նոր է լինում  
դուրս եկած. դուռը երկու կողպէքով միա-  
կած է եղել բայց ծերունին դուրս դալուց՝  
մռացել է վեր առնել զրաից սանդուղքը  
և իսկոյն երեխաների միտքն է եկել լու-  
սամուտով մանել ներս և տեսնել ինչ կայ

այդ երևելի հողմաղացում: . . .

Օ արմանալի բա՛ն . ջրաղացների չորս բոլորոտիքը դարտակ, ոչ մի պարկ, ոչ մի հատ ցորե՛ն. աղիւրի հետք ամեննեին չէ եղել ոչ պատերի և սարդիոստայների վրան:

Մընչեւ անդամ չ'կար այն պատուական հոտը, որ լինումէ ջրաղացներում աղած ցորենից: . . . Պալսաւոր թախտը ծածկուած էր թանձր փոշիով և նիշար կատուն քնած էր նրա վրա:

Ակրքին մասը նոյնպէս ազգաւու էր և դարտակ, անպէտք մահճակալ, մի քանի կտոր ցնցուաներ, մի կտոր հաց սանդուղքի վրա և յետոյ մի անկիւնում 3—4 ծակ քասկեր, որոնցից թափվում էին աղը և հին ծեփի կտորներ: . . .

Ե՛սա, ի՞նչ էր Աօռնէլ պապի դադունիքը:

Ե՛յդ իսկ ծեփը նա տանում էր երեւկյեանները ձանապարհներով իւր հողմաղացի անունը չ'կոտրելու համար և որպէս զի մենք կարծէինք թէ նա ալիւր է աղում... իւրղան հողմաղաց. իւրղան Աօռնէլ. Ե՛ս գիաղացները վաղուց նրանից յետ էին

քաշել վերջի ալիւր աղացողներին: Յակերը առաջուայ պէս շարժվում էին, բայց ջրաղացքարի տակը դատարկ էր: Երեխանները արտասուքն աչքին եկին ինձ պատեցին ինչ որ տեսել էին: Այրտս իսիստ շարժուեց երբ. նրանց խօսքերը լսեցի... էլ ժամանակ չ'կորցրի, վազեցի հարեւաններիս մօտ, պատմեցի նրանց կարծ խօսքով բոլոր բանը և մենք ամենքս համաձայնուեցինք մեր մէջ տաննել իսկոյն հողմաղացը բոլոր ինչ քան մեզ մօտ ցորեն կար: . . . Ասեն ու կատարելու մէկ եղաւ: Բոլոր գիւղը ոտքի ելաւ և կաղմեցինք երկար շարք էշերով բեռնած ցորենով:

Հողմաղացը բացուեցաւ կրնկան վրա: Շ էմքում նստած էր Աօռնէլ պապը մի քսակի վրա, որ լիքն էր ծեփով. զուխը ձեռների վրա կախ ձգած. տուն վերադառնալով՝ նա նկատել էր որ իւր հողմաղացը մարդ է մտել իւր բացակայութեան միջոցին, որ տխուր ու ցաւալի գաղտնիքը բացուել է: . . . Խեղճ ե՛ս, կրկնում էր նա, այժմ ինձ մնում է միայն մեռնել: Եւ նա հեծկլտում էր այնպէս, որ նրան նայելով՝

մարդու սիրով կտրտվում էր. և ի՞նչ-  
ի՞նչքնքոյց անուններ չէր տալիս նա իւր  
հողմաղացին, նրա հետ խօսում էր ինչպէս  
կենդանի մարդու հետ:

Այդ վայրին էշերը ներս են  
մտնում բազը, իսկ մենք “բարի-հին,, ժա-  
մանակիների նման, կանչում էինք ինչքան  
ուժներում կար. “Հէ՛ հողմաղաց, հէ՛  
ջաղացան,,,: Տուպրակները դիզուեցան դը-  
րան առաջ և գեղին հատիկները թափ-  
վում էին գետնի վրա ամեն կողմից:...  
Կոռնէյլ պապը տեսածին չէր հաւատում:

“Ես վեր է առնում ցորենը իւր դոլ-  
դոջուն բուռի մեջ և շփում էր նրանց, ծի-  
ծաղում և լաց լինում միենոյն ժամանակ...  
“Վայ ցորեն է, Տէր իմ Աստուած... ի'սկ  
ցորեն է, թողէք մի լաւ նայեմ վըսնն,,,: Յե-  
տոյ նա դարձաւ մեզ և ասաց. “Դէ՛՛ ես  
զիտէի որ էլի լինձ մօտ էք գալու... բոլոր  
այդ շոգէաղացները խարեբաններ են,,,...

Մենք ուղեցինք նրան հանդէսով աա-  
նել գիւղ: “Ո՛չ, որդիքս, ո՛չ ամենից ա-  
ռաջ սէտք է կերակրել իմ հողմաղացին:  
Երեակացեցէք, քանի՛ ժամանակ է որ նրա

ատամները զուր աեղդ իրար են քավում, ...  
Մենք բոլորս արտասուեցինք տեսնելով ինչ-  
պէս խեղճ ծերունին շփոթուել էր, բա-  
նում էր պարկերը և ջրաղացքարերի ե-  
տելիցն էր կենում, մինչ դեռ ազվումէին  
հատիկները և նօար փոշին բարձրանում էր  
գէպի առաստաղը:

Այդ օրից յիրաւի մենք չ'թողեցինք  
ծերունի ջրաղացպանին անդորդ:

Յետոյ մի առաւօտ մեռաւ ծերունի  
Կոռնէյլ պապը. մեր վերջին հողմաղացի  
թերը դադրեցին շարժելուց և այս ան-  
դամ յաւիտեան.... Մեռաւ Կոռնէյլը և  
նրա տեղը ոչ ոք չ'երևեցաւ:

Խօնչ արած, պարոն, աշխարհումն  
ամեն բանի վերջ է լինում և պէտք է են-  
թագրել որ հողմաղացների ժամանակը  
նոյնպէս անցել է, ինչպէս որ անցել է  
Հռուսակի վրայի լաստերի և մեծ կօշիկնե-  
րով բաճկոնների ժամանակը:—

ՊԵՐՈՒ ՍԵԳԻՆԻ ԵՅՉԻԿԻ.  
(ԱԼԹՈՆԾ ԳՐԴՔ.)

Փարոն Սէգէնը այծեր պահելում  
շատ վաղուց էր բախտ չունէր: Բոլոր նրա  
այծերը փչացան միւնոյն կերպով. մի գե-  
ղեցիկ առաւօտ նրանք կտրում էին իրանց  
կապերը, փախչում էին սարերը և այնտեղ  
նրանց ուտում էր գայլը: Ոչ վախը դայլեց,  
ոչ տիրոջ փաղաքաշանքը, — ոչինչ չէր կա-  
րողաննում նրանց կապած պահել: Երեկ  
այդ այծիկները անկախութիւն սկրող էին  
և ինչ կուզէր լինի՝ նրանք պահանջում  
էին, որ իրենք լինին աղատ-արձակ:

Խարեսիրտ Սէգէնը ամենելին չէր  
հասկանում զրանց այդ յատկութիւնը և  
մնացել էր շուարած: «Ես ասում էր. «Ոչ  
ինչ հնար չկայ այդ ցաւին դարման տա-  
նելու, այծերը ինձ մօտ ձանձրանում են  
և ես չ'զիաեմ ինչպէս պահեմ նրանց,,:

Սակայն ինքը չէր յուսահատուիլ և

վեց այծերիցը զըլվելով՝ գարձեալ եօթներ-  
սորդին գնեց, բայց այս անդամը բոլորովէն  
նորածէն այծ գնեց, որպէս զի աւելի լաւ  
կարողանայ իրեն վարժեցնել և ընտելացնել:

Ո՛չ, այդ ի՞նչպիսի սիրուն այծիկ էր,  
ինչ գեղեցիկ էին նրա խոնարհ աշքերը,  
նրա զինուորականի միրուքի նման փոքրիկ  
միրուքը, նրա սե փայլուն կջղակները, իսու-  
խալոտ եղջերները և երկար սպիտակ բուր-  
դը, որ նրան ինչպէս վերմակ ծածկել էր.  
բայց ի՞նչպէս նա քաղցր վարուող և հան-  
դարս էր: Թառյլ էր տալիս որ իրեն կը-  
թեն, — ամենելին չէր շարժվում, ոտը կաթ-  
նամանի մէջը չէր մտցնում... հրաշք էր  
և ոչ այծիկ.

Պ. Աէգէնի տան ետև կար մի փոքր  
անկիւն շրջապատած փշերով, ուր և տե-  
ղաւորեց նա իւր փոքր ամսիկին: Խոտի ա-  
մենալաւ տեղը կապեց նրան մի ձօլից, պա-  
րանը երկար թողեց և ժամանակ առ ժա-  
մանակ դալիս էր տեսնի թէ լաւ է նա: Այ-  
ծիկը երեւում էր, որ շատ բախտաւոր էր  
և խոտն արածում էր այնպէս գոհ դէմքով,  
որ պարոն Աէգէնը մնացել էր զարմացած:

Ա երջապէս, մասձեց խեղջը. գոնէ այս  
մէկը ինձ մօտ չի ձանձրանում, ...

Պարոն Աէգէնը սխալուեց. նրա այ-  
ծիկը ձանձրանում էր:

Մի անգամ դէպի սարերը նայելով ա-  
սաց նա ինքն իրեն. «Ե՛լի, ինչպէս լաւ  
ովէտք է լինի այնտեղ վերեներում... ի՞նչ  
քաղցրութիւն կ'լինի ցատկել այնտեղ թա-  
րլը խոտերում առանց այս անհիմած պարա-  
նին, որ տաշում է վիզս... կարելի է էշերը  
եկները սիրում են ցանկապատ տեղերում  
արածել, բայց այծերը պէտքէ աղատ լինեն,,:

Այդ ժամանակից այնտեղ բուսած խո-  
տը նրան անհամ թուեց: Այծիկն սկսեց  
ձանձրանալ և նիշարել, նրա կաթը հետ-  
զվետէ նօսրանում էր: Յաւալի էր տես-  
նել, որ նա ամբողջ օրեր աշխատում էր ա-  
ղատուել կապանքից, չէր զարձնում զլուխը  
սարերի կողմից և գանգատուելով կանչում  
էր մէ— է—...

Պ. Աէգէն պարզ նկատում էր, որ այ-  
ծիկն մի փատ բան է պատահել բայց չէր  
կարողանում հասկանալ: ...

Մի անգամ առաւօտեան, նա հաղիւ

վերջացրել էր կթել, այծիկը դարձաւ դէսպի նրան և ասաց իւր լրզուով:

— «Լ սեցէք, պ. Աէգէն, ինձ համար շատ տխուր է ձեզ մօտ, թողէք գնամ սարերը:

— Ա՛յս, Աստուած, սա էլ այնտեղ, կոչեց շուարած Աէգէնը և վախից ձգեց ձեռքից կաթնամանը և յետոյ նստեց խոտի վրա: «Խօնչպէս, բլանկետա, դու ուզում ես գնալ»:

— Ա՛յս, պ. Աէգէն:

— Մի՞թէ այստեղի խոտը քիչ է քեզ համար:

— Օ՛, ո՞չ պ. Աէգէն:

— Կարելի է կապդ կարձ է, ուզում ես երկարացնեմ:

— Չարժէ պ. Աէգէն:

— Բւլեմն քեզ ի՞նչ է հարկաւոր, դու ի՞նչ ես ուզում:

— Ես ուզում եմսարերը գնալ պ. Աէգէն:

— Բայց չ'գիտե՞ս որ սարերում գայլեր են մանդալիս. ի՞նչ կ'լինի եթէ դու նրանց կ'պատահես:

— Ես նրանց հարու կ'տամ իմ եղջիւրներովս պ. Աէգէն:

— Օ—հօ—հօ, դոյլը շատ կ'փախի քո եղջիւրներից. նա իմ այն-տեսակ այծերս է կերել որոնց եղջիւրները քոնից շատ-շատ լաւ էին: Դու հօ ձանաշում էիր ծեր Ուենոդին, որն այնտեղ էր անցեալ տարի, եռևելի այծ էր, —ուժով և չար: Կյա ամբողջ գիշերը կոռել է գայլի հետ, բայց վերջապէս առաւօտեան էլի գայլը կերել է նրան:

— Այդէս. խեղճ Ուենօդա...բայց դա ինձ համար ոչինչ չէ նշանակում, պ. Աէգէն. թողեցէք գնամ սարերը:

— Ողորմած Աստուած, բացականչեց պ. Աէգէնը. այս ի՞նչ բան է պատահում այծերիս հետ: Ահա սրան էլ կուտի գայլը: Ո՛չ, ո՞չ, ես կամքիդ հակառակ քեզ կ'կապեմ, չարաձձի, դու կարող ես պարանը կտրել, ուստի ես քեզ կ'փակեմ փարախի մէջ և այնտեղից դու արդէն էլ դուրս չես դալ:

— Այդ ասելով պ. Աէգէնը տարաւ այծին փարախ, ուր բոլորովին մութ էր, դուռը փակեց, բանալին էլ երկու անգամ շուռ տուաւ: Բայց դժբախտաբար նա մոռացել

Էր լուսամնւտը փակել և հէսց որ նա երեսը դարձրաւ, հեռացաւ, այծիկը ցատկեց լուսամնւտից և փախաւ....

Երբ սպիտակ այծիկը հասաւ սարերը, նրան ամենքը մեծ ուրախութեամբ լնդունցին. զեռ ոչ երբէք ծերունի եղենները չէին տեսել նրա նման մի պատուական հիւր: «Արան ամեն տեղ մի փոքրիկ դշխոյի պէս էին ընդունում: » ազանակը զրեթէ մինչեւ գետին ցածանում էր, որ այծիկին դիպւշի իւր շիւղերով: Ոսկի ծաղիկները բացել էին նրա համար իւրեանց թերթիկները և նրանք այս անդամ աւելի սքանչելի հոտ էին բուրում, ամբողջ սարը նրա համար զարգարուել էր ինչպէս տօնի օր:

Մեր այծիկը ինչպէս բախտաւոր պէտք է համարէր իրեն: Աշու կապանք կար, ոչ ձօղլ ոչինչ չէր արգելում նրան՝ ցատկել և արածել աղատաբար: Մւ ինչքան խոտ կար: նա մինչեւ եղջիւրները կորչում էր նըրանց մէջ. սյդ խտն էր հոտաւէտ, փափուկ և հաղար մի տեսակ ուրիշ պատուական խոտերով շըջապատուած: «Արանք ամենկին ցանկապատի միջի խոտին նման չէին:

Ինչքան ծաղիկներ կար, ծաղիկներ, ահաղին կապոյտ շեփոր ծաղիկ, երկար ծիւրանի հարսնէմաններ, վայրի ծաղիկների ամբողջ անտառներ՝ լիքը հարբեցնող հիւթերով....

«Քիչ էր մնացել սպիտակ այծիկին ուրախութիւնից ինեւքը զլիսիցը թռչէր, նա սկսեց թաւալ-թաւալ անել ոտները դէպի վեր բարձրացնելով և չափչփել մարմանդը՝ ընկած շազանակների և չոր տերեւների հետ: Հնետոյ յանկարծ մէկ ցատկելով էլի ոտի է կանգնում և ոլանում է զլուխը բարձրացրած ծառերի և թփերի միջով, կամ վեր է ելնում ժայռերի զլուխը, կամ մոնում է ձորի մէջ, վերե, ներքե, ամեն տեղ....

Կարելի էր մատան, որ ոչ թէ միայն նա էր, այլ թէ պ. Աէգէնը տան այծունէր սարերում, ու ոչ մի երկիւղալի բան Շանկէտի միտքը չէր ընկնում:

Մէկ ցատկելով նա անցնում էր մեծ առուակները, որմնք նրան ծածկում էին փոշիով և փրփուրով բողոքովին թրջուած նա մեկնվում էր, մի տափարակ տեղ արեկի տակ, որ չըրացնում էր նրա բուրթը....

Ա՞ի անդամ՝ մի գեղեցիկ ծաղիկ բեր-  
նումնա մօտեցաւ մի ապառաժի ծայրին  
և տեսաւ շատ խոր ցածում պ. Աէգէնի  
տունը իւր ցանկապատով. այծիկին այդ  
բանը շատ զուարձացրաւ և քիչ էր մնա-  
ցել որ նա լաց լինի:

— Ինչպէս այնտեղ նեղուածք է, ասաց  
նա, և ինչպէս էի կարողանում ապրել  
այնտեղ:

Խեղճ այծիկ, դու այնքան ես բարձ-  
րացել, որ քեզ թւում է իբր թէ ամբողջ  
աշխարհը կարող է քեզ հետ հաւասարվել:

Ա՞ի խօսքով՝ փառաւոր օր եղաւ մեր  
այծիկի համար: Աէս օրին այս կողմ այն  
կողմ վազելիս հանդիպեց մի խումբ այծեամ-  
ների, որոնք լաւ ախորժակով ուտում էին  
փայրի խաղող: Ա՞ր փոքրիկ վազվզողին  
նրանք շատ հաւան կացին, ուստի խաղո-  
ղի թփի մօտ լաւ տեղ տուին նրան: Իայց  
յանկարծ փշեց զովքամին, սարը ծածկ-  
վեցաւ ալ շուաբով, հասաւ երեկոն: Յա-  
ծում դաշտերն անհետացան մութի մէջ:  
Պ. Աէգէնի ցանկապատը կորաւ մշուշի  
մէջ և երեւում էր միայն նրա տան կտուրը

իւր ծխվող յերդիկով: Իշանկետան յսեց խաշ-  
ների զանդակների ձայնը, նրանք դէպի տուն  
էին դառնում և նա տիրից....

Ինչպէս թուաւ նրա մօտից և իւր  
թեով դիպաւ այծիկին, նա դողաց... Յե-  
տոյ յանկարծ ամբողջ սարում լսուեցաւ մի  
անընդհատ աղաղակ. ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... ո՛ւ...

Եյժմմիայն այծիկը մտաբերեց գայ-  
լին... ամբողջ օրը ուշքից ընկած ամենելին  
չ'մտածեց նրա մասին. յանկարծ լսուեց պ.  
Աէգէնի փողի ձայնը, որ կանչում էր այ-  
ծիկին հովտի միջից, նա վերջին փորձն  
էր փորձում:

Ո՛ւ... ո՛ւ... գոռում էր գայլը:  
“Ետ դարձիր, ետ դարձիր”, կան-  
չում էր պ. Աէգէնի փողը:

Եյնպէս ըոսպէ էր լինում, որ Իշան-  
կետան ուզում էր վերադառնալ, բայց երբ  
միան էր գալիս ձօղը, պարանը, ցանկապա-  
տը՝ նրան երեւում էր որ էլ դժուար է այդ  
կեանքին լնուելանալ... նա վճռեց, որ աւե-  
լի լաւ է մնալ:

Պ. Աէգէնի փողը արդէն լուել էր:  
Յանկարծ նա իւր ետեւ տերևների

Խշխշոց լսեց՝ յետ դարձաւ և տեսաւ մութի մէջ՝ կարծ՝ բողոքովին ուղիղ ականջներ և երկու՝ կրակի պէս վայլող աչքեր, — դա դայլն էր....

«Աս անշարժ նստած էր իւր ետևի թաթերի վրա, կերպարանը ուղղակի աշաղին և մտիկ էր անում փոքրիկ ճերմակ այծի վրա, առաջուց սրելով իւր ատամները։ Պայլը շատ լաւ գիտէր, որ անպատճառ նրան կուտէ, այդ պատճառաւ էլ՝ չէր շտապում։ Միայն երբ երեսը նրանից դարձաւ, նա չարանենդ կերպով սկսեց ծիծաղել և ասաց։ — «Շա, Շա, Շա, պ. Ահղինի այծիկ.,, հաստ կարմիր լեզուն կախ ձգեց իւր կեղաստ դունչով։

Բանկետան զգաց որ ինքը կորած է...»

Առ ըոսպէ նա յիշեց ծեր Անօղի պատմութիւնը, որ ամբողջ գիշերը մըցել էր, բայց առաւօտեան դիմ այնուամենայնիւ, գայլը կերել էր նրան։ Քիչ էր մնացել, որ մէր այծիկը թոյլ տար որ այդ ըոսպէին զայլն իրեն ուտի, բայց լու խորհեռուց յետոյնա թողեց այդ միտքը և կռուելու դիրք բռնեց. պըսիւր ցած, եղջերնե-

ըր վեր, ինչպէս վայել էր պ. Ահղինի քաջայծիկն...։ Ոչ թէ նա յոյս ունէր սպանել դայլին, ոչ ոյծերը գայլ չեն սպանում, այլ նա ուզում էր փորձել՝ կարող է ինքն էլ Անօղի պէս մաքառել այնպէս երկար և լեշը մօտեցաւ և փոքրիկ եղջեւը ները իրենց գործը սկսեցին։

Ոչ քաջ այծիկ։ Ինչպէս նա լու կռվում էր։

Ու պակաս քան տասն անգամնա ստիպեց գայլին յետ կենալ, շունչքաշելու համար։ Այդ հանգչելու կարծ վայրկեններում՝ մէր փոքրիկ քաղցրասէրը շտապում էր կըտրել իւր սիրելի խոտերից, ծամել և լիքը բերնով սկսում էր էլի կռուել... Այդպէս գործը շարունակուեց ամբողջ գիշերը։ Ժամանակ առ ժամանակ այծիկը տեսնում էր ինչպէս պարզ երկնքում պսպղում էին փայլուն աստղերը և մտածում էր ինքն իրեն։ — «Այս եթէ գոնէ մինչեւ արշալցս դիմանայի,,»

Աստղերը մէկը միւսի ետևից հանգեցին։ Բանկետան առաջուանից աւելի էր աշխատում իւր եղջեւը բռնել, իսկ գայլը ա-

տամներով:

Նորիզոնում գունատ լոյս սկսեց ե-  
րևալ: Այս հեռու գոմանոցից լսուեցաւ  
ձայնը կտրած աքաղաղի կանչելը:

— «Ա երջապէս ահա՛, մոածեց խեղճ  
կենդանին. նրա ցանկութիւնն էր մինչեւ<sup>1</sup>  
արշալոյսը մնալ՝ յետոյ մեռնել և նա մէկ-  
նուեց գետնի վրա իւր պատուական Ճեր-  
մակ մորթու մէջ, որն ամբողջ արիւնաթա-  
թախ էր գարձել: Այս ժամանակ գայլը  
ընկաւ նորա վրան, պատառ պատառ արաւ  
և լափեց:

23 Յուլիս 1880 Թօնէլս:

## ԴՐՈՇՎԱԿԻՐ.

• (ԱԼՖՈՆՍ ԴՕՒՔ)

Ա.

Օօրախումբը երկաթուղու հողաբը-  
լուրի զառիվայրի վրայից կռվում էր և  
գնդակների նշան էր դարձել բոլոր պրու-  
սական զօրքին, որ գումարված էր նրան  
դիմաց ու պատսպարուած մի անտառում։  
Ճրաճութեան ասպարէզը ութուն  
մէլքի տարածութիւն էր։ Խմբակապետ-  
ները զինուորներին պատուիրում էին՝ պառ-  
կիր, ... բայց ոչ ոք չէր ուզում հնազանդիլ  
և անվեհեր զօրախումբը շարունակում էր  
կանգուն մնալ իւր զրօշակի շուրջը պատաժ։

Ընդարձակ հորիզոնում՝ վերջալցածի  
յետին ձառաղոյթներով լուսաւորուած, նոր  
հասկ ձգած գարիի արտերում և մարմանդ-  
ներում, — այդ մարդկանց ամբոխը յոդնած  
և փաթաթուած աղօտ ծուխով՝ նմանում

էր խաշինքին, որին բաց դաշտում վրայ  
էր հասել աարսափելի մըրկի առաջին յոր-  
ձանքները...։ Եւ յիրաւի, գնտակները ի՞սկ  
անձրեսի պէս էին թափվում այդ զառի-  
վայրի վրա։ Ա ավում էր միայն հրաձգու-  
թեան ձայթիւնը և ռազմական կաթսա-  
ների խուլ ձայնը, որոնք զլորվում էին դէ-  
պի փոսը, և գնդակների վզվզոցը, որ եր-  
կար ժամանակ անցնում էր պատերազմի  
դաշտի մի ծայրից դէպի միւսը՝ մի տեսակ  
սրահնչեւն և չարագրգիռ բոմբիւնով։ Ժա-  
մանակ առ ժամանակ զրօշակը, որ բարձ-  
րացած էր զինուորների զլուխների վրայից՝  
տատանուելով հրաձգութեան յորձանքնե-  
րից՝ ընկնում էր գետին ծուխի ամպերում։  
այդ վայրկենին լսվում էր մի գուող և խստ  
ձայն, որ ծածկում էր հրաձգութեան թըն-  
դիւնը և ձայնը կտրած վիրաւորուածների  
անէծը, — “դէպի դրօշ, տղէ՛ը, դէպի  
դրօշ...։ Եւ խկոյն իմրակապետներից մինը  
դուրս էր գալիս յառաջ. նրա պղտոր ինչ-  
պէս շուտք՝ դէմքը աչքի էր զարնում այդ  
արիւնոտ մշուշի միջեց—և քաջաց դրօշը  
նորից ինչպէս կենդանացած կրկին ծածա-

Նում էր կռուի զաշտում:

Քսաներկու անդամ՝ ընկել էր նա...  
քսաներկու անդամ՝ ոյդ ձօղը դեռ տաքչ  
տաք, դեռ ո բնկած մեռեալ ձեռքից,  
կրկին բոնվում էր, բարձրանում էր և երբ  
արել մթնելոց յետոյ, զօրքից մի բուռ  
մասցած մարդիկ հանդարատ աեղի էին տառ  
իս, — գրօշը արդէն մի հասարակ կտոր էր  
զարձել տասնապետ Հոննուսի ձեռքում,  
որ քսաները բրդորդ դրծակակիրն էր  
ոյդ օրը:

Բ.

Համասպետ Հոննուսը հն ծառա-  
յող էր, հաղիւ իւր անունը զրել կարո-  
զացող. նա իւր կեանքի քսան տարւն դործ  
էր զրել հարժւապետի նշան ստանալու  
համար: Ընկեցիկ-որդի բոլոր նեղութիւն-  
ները, զնուրդանոցի բժամուացնող աղդեցու-  
թիւնը երեւում էւն նրա ցածր և պինդ  
ձակատի վրա, նրա սաշմական պարկով  
և եռնաւրուած մէջէն վրա և նրա ինչնէս  
հասարակ զնուուրի շարժմունքին վրա կար-  
գուն մէջ: Հէնց այդ կռուի երեկոյեան զօ-  
րանիբի առաջնորդը նրան տաց: «Դու

դրօշը վերցրիր, ովք քաջ, պահիր, դու  
դրան,,,: Եւ նրա ռազմական զգեստին վրա,  
որ անձրեկից և վառօդից գոյնը տուել էր  
բոլորվին, բանակում օղի ծախող կինը կա-  
րեց հարիւրապետի նշանը: Ա՞իսյն պար-  
ծանիքն էր այդ նրա համեստ կեանքում:

Վիչ առաջ հասարակ զինուուրի ծուռ  
մէջքը ուղղուեց: Այդ խզակի արարածը  
որ վարժած էր միշտ մանդալ մէջքը ծուած,  
աչքերը գետնին ձղած, — այդ ժամանակից  
ստացաւ գոռող դէմք, նայուածքը միշտ դէ-  
պի վեր ուղղած, որպէս զի տեսնէ թէ ինչ-  
պէս է ծածանվում այդ կտաւի կտորը և  
որ բռնէ նրան ինչքան կարելի է ուղիղ,  
բարձր, — բարձր մահից, գաւաճանութիւ-  
նից, հարուածից: Առուի օրերում Հոռ-  
նիուսից աւելի բաղդաւոր մարդու չէր տե-  
սել ոչ ոք. նա պինդ երկու ձեռքով բռնում  
էր իւր գրօշի ձօղը, որ լաւ դրած էր կը-  
տաւէ ամանի մէջ. նա մի խօսք անդամ  
չէր խօսում, չէր շարժվում: «Օանրաբա-  
րոյ, ինչպէս ժամարար քահանայ, նա կար-  
ծես, իւր ձեռներում սրբութիւն էր բռնած:   
Առողը նրա կեանքը, բոլոր նրա ոյժը ասես

այդ ժամանակ նրա մասներումն էր, որոնք  
սեղմում էին զեղեցիկ, ոսկեթել կտաւի կը-  
տորը, որի վրա գնատակների կարկում էր թա-  
փում և նրա աչքերում, որոնք ախոյեան  
կանչող կերպով ուղակի դարձրած էին պրու-  
սացիներին, կարծես, ասելով.— “<sup>▲</sup>ապ'ա  
փորձեցէք առնել սրան ինձանից,,,: ”

Ու ոք չէր համարձակվում այդ անել,  
և ոչ իսկ մահը: Բօռնի և Պարավելոտի  
երկու ամենաարիւնահեղ պատերազմներից  
յետոյ, գրօշը ամեն կողմից դառնում էր  
կորստուած, պատառտուած: բայց նրան  
միշտ կրում էր էլի ծեր <sup>▲</sup>ոռնիուսը:

¶.

<sup>▲</sup>ասաւ վերջապէս Աեպտեմբեր ա-  
միսը, զօրքը կանգ առաւ Մէցի տակ, ուր  
թնդանօթները ծածկուեցին ժանդով և  
ուր աշխարհիս առաջին դօրքը վատացած  
անդործունէութիւնից, տեղեկութիւնների  
պակասութիւնից, պաշար չ'լինելուց՝ մեռ-  
նում էր ջերմից և անձկութիւնից իւր հրա-  
ցանի մօտ: Ու վարչութիւնը, ոչ զինուոր-  
ները՝ այլ ևս չէին հաւատում յաջողութեան

միայն <sup>▲</sup>ոռնիուսն էր պահել իւր հաւատը:  
Եւագունեան կտաւի պատառը նը-  
րա համար ամենայն ինչ էր և քանի որ  
նրան իւր մօտն էր տեմնում, իրեն թվում  
էր որ դեռ ամեն ինչ կորած չէ: Դժբաղ-  
տաբար, որովհետեւ ոչինչ գործ չ'կար, զօ-  
րախմբի առաջնորդը գրօշն իրեն մօտն էր  
պահում մի դաստակերտում Մէցի մօտ և  
լեղձ <sup>▲</sup>ոռնիուսը նմանում էր այն անձկոտ  
մօրը, որի երեխան առելյանձնել էին ծըծ-  
մօր...: Սա միշտ իւր գրօշի վրա էր մտա-  
ծում: Հետոյ երբ անձկութիւնը նրան չա-  
փաղանց շատ նեղացնում էր, նա վազում  
գնում էր Մէց և բաւական էր, երբ նո-  
կուենէր իւր գրօշը էլի այնտեղ հանգարա-  
թեքուած պատին, — որ վերադառնար տռւն  
լի արիութեամբ, տոկոնութեամբ, բերելով  
իւր հետ՝ գեպի իւր թրջուած վրանը՝ կոիւ-  
ների յիշատակը. նա յիշում էր ինչպէս լայն  
բացուած ծածանուող զրօշակով յարձակ-  
վում էին պրուսական պատնէշների վրա:  
Զօրավար Բագենի հրամանը նրա բոլոր  
խորհուրդները ցրեց...: Մի անգամ առաւ-  
ւութեան զարթնելով, <sup>▲</sup>օռնիուսը տեսաւ,

որ բոլոր բանակը շփոթութեան մէջ է. զիս  
նուղները խումբ-խումբ կանդնած, զրգուում  
էին իրար՝ կատաղի գոռում-կոչումով, սպառ-  
նալով իրենց բռունցքներով՝ ցոյց տալով  
դէպի քաղաքի կողմը, իրը նրանց զայրոյ-  
թը մատնանիշ էր լինում դէպի մեղաւորը:  
Ալում էն աղաղանիր, ... “բռնել  
նրան, քննակակոծ առնել, ... Եւ խմբա-  
կապնտները թոյլ էին տալիս խօսել... նր-  
անք ղլուխները քաշ ձգած մի կողմ էին  
քաշուել, կարծես նրանք ամաչում էին ի-  
րենց զինուղներից: Եւ խկապէս ամաչե-  
լու բան կար: Ճարիւր յիսուն հաղար լաւ  
զինուղուած, գեռ առոյգ, զուարթ զօր-  
քին՝ նոր էր կարդացուել զօրավարի հրա-  
մանը, որ պատուիրում էր առանց մարտի  
անձնատուր լինել թշնամու ձեռքը:

— “Իսկ գրօնե՞րը”, հարցրեց ճոռ-  
նիուսը գունատուելով... դրօշները միւս մնա-  
ցեալ հրացանների, ողջ մնացած սոյլերի և  
բոլորի հետ յանձնուած էր արդէն: “Աս-  
տուած մեծ”, հեծկլտալով բացականչեց  
խեղճ մարդը: “Բայց իմ գրօշը, ինչ որ  
էլ լինի նրանք չեն ստանալ: ... Եւ նա փու-

թով շնչառպառ վաղեց դէպի քաղաքի կողմը:

Դ.

Այնտեղ նոյնապէս ահաղին իրարան-  
ցում կար. քաղաքացիք, աղղային մարդիկ-  
ները, կամաւորները աղաղակում, բորբոք-  
վում էին: Անցնում էին պատղամաւորու-  
թիւններ գողալով զգուանքից և ուղղուե-  
լով դէպի զօրավարը: Անայն հոռնկուսը  
ունի չեր աեսնում, և չեր լսում: նա ինքն  
իրեն խօսելով բարձրանում էր գաստակեր-  
տի ձանապարհով: “Առնել ինձնիք իմ գր-  
րօշը... լաւ է լաւ. միթէ այդ կարելի է,  
խկո՞յլի իրաւունք ունի նրա վրա: Թաղ  
զօրավարը տոյց պրուսացիներին ինչ որ ի-  
րեն է պատկանում, իւր ուկեղօծ կառքե-  
րը, Ահքսիկայից բերած ոլատուական ար-  
ծաթեսյ անօթները, բայց դրօշը, Դրօշն  
իմն է, զրօնի իմ պատիւն է, ես չեմ թոյլ  
տալ որ նրան զիսկէն, ... Բողոք այդ կցկը-  
տուր խօսքերը ընդհատիւմ էին շարժման  
արագութեամբ և կակաղմամբ. բայց ծե-  
րունու զիսում մի միտք ծնեց: Պարզ և  
բոլորովին որոշ միտք՝ առնել դրօշը, տա-

նել զօրքի մէջ և անցնել Պրուսացիների  
շարքերը նրանց հետ, ով կ'ցանկանայ հե-  
տեւել նրան:

Երբոր ։ոռնիուսը տեղ հասաւ՝ նը-  
րան մինչեւ անգամ չէին ընդունում. զօրա-  
խըմքի առաջնորդն էլ զայրացած՝ ոչ ոքի  
չէր ուզում տեսնել. բայց այդ ։ոռնիուսի  
դործը չէր: «Եա կանչում էր, երդում էր,  
յետ էր հրում պահապաններին. «իմ դը-  
րօշը, ես ուզում եմ ստանալ իմ դրօշը....  
Ա երջապէս պատուհանը բացուեց:

— «Այդ դո՞ւ ես, ։ոռնիուս:

— «Այ՛ո, զօրապէտ:

— Բաղրը դիօշները զինարանումն են, գնա  
սյնտեղքեղ կ'տան ստացական:

— «Ստացական, ինչո՞ւ համար:

— «Այդպէս է զօրապարի հրամանը:

— «Բայց պարոն զօրապէտ....

— «Ա՞ի վրդովի՞ր հանգստութիւնս,,.

և պատուհանը փակուեց:

Օեր ։ոռնիուսը տատանվում էր  
ինչպէս հարբած: — «Ստացական, ստացա-  
կան, կրկնում էր նա: Յետոյ էլի քանի մի  
քայլ արաւ և այսքանը հասկացաւ, որ դը-

րօշը զինարանումն է ու ինչ որ էլ չլինի  
պէտք է նրան յետ առնել:

Ե.

Զինարանի գոռները կրնկան վըս-  
բաց էին պղուսական սայլերին, որոնք կար-  
գով կանգնած էին բակում, ձանապարհ տա-  
լու համար: ։ոռնիուսի դողը բռնեց՝ երբ  
ներս մտաւ: Բաղրը մնացեալ զրօշակակիներն  
էլ այնտեղ էին, — հարիւր յիսուն կամ եր-  
կու հարիւր իմբակապետներ տրտում: և  
մունջ. տխուր սայլերը անձրեի տակ կանգ-  
նած, մարդիկ՝ այդ բողորը նմանում էր  
թաղման հանդէսի: Ո՞ի անկիւնում դիպո-  
ւած էին ցեխոստ փողոցի վըս Բագէնի զօր-  
քի բոլոր դրօշները: Ոչինչ չէր կարող լի-  
նել այնքան տիրալի՝ որչափ այդ շողուն մե-  
տաքսէ կտորները, նրանց ոսկեզօծ փնջերը  
և քանդակած կոթերը ձգուած գետնի վըս,  
թրջուած անձրեւմ և ծածկուած ցեխով:

Այն խմբակապետները, որի պարտքն  
էր զրօշները յահճնել յաղթողներին՝ առ-  
նում էր մէկ մէկ նրանց իւր ձեռքը և երբ  
անուանում էին զօրակամքի անունը, ամեն

մինը դրօշակակիրներից դուրս էր գալիս տռաջ՝ ստացականը առնելու համար։ Եցրկու պրուսական խմբակագեաներ սառն կերպարանքով դարսում էին դրօշները սայլերի մեջ։ Այդպիս անցնում էր քուքով մեր սրբագան և վառաւոր դրօշներ, ցոյց տալով ձեր վերքերը, տիսրութեամբ դիպչելով սալայատակին, ինչպէս թե ից զարնուած թռչուներ։

Դուք դնացիք ամօթով, ինչպէս վայելէ գեղեցկին՝ երբ նրան ծածկում են նախատինքով և ամեն մինը ձեզանց տարառ Գրանսայից մի մաս։ Ձեր գունատ ծալուածքները յիշեցնում են հեռաւոր արշաւանքների արեւի ճառագայթները, գնդակների հետքերը վկայում են ընկած անյայտ հեղոսների համար, որոնց դրօշներին տակ նկատելով թշնամին՝ յարձակուել ջարդել էր։ — “ ռոնիուս քոնն է կարգը... կանչում են, գն'ա, ա՛ռ ստացականը, ...”

Համար նրա հարկաւորն էր ստացականը։ Դրօշը այդտեղ նրա առաջն էր. անտարակոյս այդ նրա դրօշն էր, ամենագեղեցիկը և ամենից շատ նահատակուածը... Եւ նրան տեսնելով, չոռնիուսին թը-

ւում էր, որ նա գեռ կանգնած է զառիվայրի վրա, նա լսում էր ինչպէս վղվղում էին գնդակները, ինչպէս ձայթում էին կաթսաները և լսում էր զօրախմբի առաջնորդի ձայնը՝ “ գէպի դրօշը տղե՞ւք, գէսի դրօշը...” Յետոյ երբ նրա ընկերներից քսան երկուսը տապալեցին գետնի վրա, նա՝ քըսաներորդ-երրորդը յառաջ վաղեց ըստ իւր կարդին՝ խեղջ դրօշը բռնելու, որ տատանվում էր, որովհետեւ էլ ձեռք չկար որ նըրան տանէր, ... Այդ օրը նա երգեց պահել և պահպանել նրան՝ իւր դրօշին, մինչև մահու ան օրը։ Խսկ այժմ...”

Այդ մոտքերն անելով նրա արիւնը գլխին զարկեց։ Ճարբած, շուարած, կորածի պէս նա յարձակուեց պրուսացի խմբակապետի վրա, իւլեց նրանից թանգարդին դրօշը՝ պինդ բռնելով երկու ձեռքով, աշխատեց կրկին անդամ բարձրացնել նրան ինչքան կարելի է աւելի բարձր, աւելի ուղիղ՝ կանչելով “ գէպի դրօ...”, Աակայն նրա ձայնը յանկարծ կտրուեց. նա զգաց ինչպէս դրօշը շարժուեց իւր ձեռքում և դուրս պրծաւ։ Այդ օդում, այդ մահուան օդում,

23764

2013

որ թանձրութեամբ նստել էր ընկճուած  
քաղաքի վրա, դրօշները այլ ևս չէին կա-  
րող ծածանուել, ոչ մի ազատ բան այլ ևս  
չէր կարող ապրել...Եւ ծեր Հոռնիուսը՝  
ինչպէս կայծակահար՝ ընկաւ մեռած:



Թարգմ. Ակադեմիա Տէր-Կոմիտէքեան:

Ա. ՄԱՍԻՆԻԱՆ

2 Օգոստոս 1880 Մասկով:



Տարբերակ թիւ 886 առ 1929 թ.  
Տարբերակ թիւ 886 առ 1929 թ.  
Տարբերակ թիւ 886 առ 1929 թ.  
Տարբերակ թիւ 886 առ 1929 թ.

